

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ՆԵՐՍՈՅԵԱՆ

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ,
ԵՐԿՈՒ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Որոշ մեկնաբաններ յանգել են այն եկրակացության, թե՛ քանի որ Նոյնինքն Յիսուս Գալիլիացի էր (Նա մեծացաւ Նապարեթում), այն մարդիկ, որոնք յիշեցնում էին Իրեն Իր հայրենակիցների հանդէպ կատարուած սպանդի մասին, գուցէ փորձում էին Իրեն եւ Իր հաւատարիմ հետեւորդներին համոզել, որ միանաւ Պիղատոսի դէմ կատարուած մի ապստամբութեան շարժման հետ: Սա մի հետաքրքրաշարժ մեկնութիւն է: Եւ եթէ այն ճիշտ է, ապա երկու դիտողութիւն է ծագում, որոնք իրար հետ շատ քիչ կապ ունեն:

ա) Մենք գիտենք, որ երկրորդ դարի առաջին կէսին Գալիլիացիները չմասնակցեցին Բար Կողբայի կամ Բարկոխեբայի ապստամբութեանը (վաղ աղբիւրներում յայտնի իբրեւ Բեն Կոպիբա՝ խաբէութեան որդի): Հռոմէացիները այդ ապստամբութիւնը անխնայ ճնշեցին: Եթէ Գալիլիացիները նախապէս մասնակցած լինէին իրենց երկրում Հռոմի ներկայութեան պատճառով կապակերպուած անհանդուրժելի արարքների մէջ, եւ եթէ Պիղատոսի նպատակն էր վերջ տալ այդպիսի արարքները սպանութեամբ եւ ճնշում բանեցնելով, ապա նա իրօք արդէն վատ կացութիւնը վատթարագոյնի էր վերածում:

Ամբողջ խորագիտութիւնը՝ ներառեալ նաեւ սովորական դիւանագէտների խորագիտութիւնը (եւրբ այն չի կատարում թաքնուած ծրագրերով), պահանջում է, որ ճշտորոշում որուի ընդմէջ պահանջին՝ ընդդէմ գրաւող կամ տիրապետող ուժին, եւ այն միջոցների միջեւ, որոնցով այդ պահանջներին զոհացում պէտք է տալ իշխանութիւնը: Պահանջ հռչակելու անարգ եղանակը չի յանգեցնում այն եկրակացության, թէ այդ պահանջը ապօրինի է կամ անորոշամբանական: Սրանք երկու տարբեր պարագաներ են, որոնք պահանջում են իւրայատուկ մօտեցում: Բերենք մի սովորական օրինակ. ենթադրենք մի ընտանիքի արդէն չափահաս դուստրը պտուէլ է սենեակի թախտը իբրեւ անկողին օգտագործելուց, եւ այժմ, ասենք թէ, իր ծնողները վիճակախաղով շահել են բազմամիլիոն դոլար, եւ աղջիկը ուզում է, որ նրանք աւելի մեծ տուն գնեն, որտեղ նա կարողանայ ունենալ իր սեփական ննջասենեակը եւ ի վիճակի լինի այն պարզարեղ իր ճաշակի համեմատ: Այս պահանջը շատերը բաւական տրամաբանական կը համարեն: Սակայն նրա ծնողները ընդդիմանում են այս պահանջը կատարել, իսկ աղջիկը այրում է իրենց տունը՝ պարտադրելու իր ծնողներին՝ կատարելու իր ցանկութիւնը: Իր ցանկութեանը համեմատ տարբերակը թէ՛ յանցագործութիւն է եւ թէ՛ անխոհեմ արարք: Բայց եթէ իր պահանջը օրինաւոր էր նախքան իր յանցագործութիւնը, այն դարձեալ մնում է օրինաւոր, նոյնիսկ իր յանցագործութիւնից յետոյ: Կարելի է վիճել, թէ աղջիկը իր կատարած ոճրային արարքով կը կորսնցնի իր պահանջին զոհացում ստանալու իրաւունքը: Դրանով հանդերձ, չափահաս եւ սիրող ծնողքը կարող են անհրաժեշտ համարել պատժել իրենց աղջկան իր սխալ արարքի համար, առանց սակայն ցոյց տալու այսպիսի մի վերաբերմունք, որպէս թէ կ'ուզենան տեսականացնել նրա յոսախաբութիւնը. մի

յուսախաբություն, որը կարող է պատճառ դառնալ ատելի յինարի եւ կործանարար արարքների:

Պիղատոսը առանց խորության Գալիլիացիներին կոտորելու փոխարեն, ատելի ճիշտ վարում կը լինէր, եթէ լսած լինէր Գալիլիացիների բողոքները եւ օրէնքի սահմանների մէջ պատժէր նրանց խռովարար արարքները, եթէ իրօք այդպիսի արարքներ կային: Եթէ Պիղատոսը ատելի խելացի վարում լինէր, հասանաբար պատմությունը այլ ընթացք ունենար: (Ի դէպ, շատ բան չգիտենք Պիղատոսի ճակատագրի մասին: Ըստ մի աւանդության՝ նա խորապէս պղծում է իր արարքների համար, մասնատրապէս, Բրիտանիան խաչելու հասարակ ժողովրդի պահանջին տեղի տուած լինելու համար եւ ապա դարձի է գալիս եւ ընդունում քրիստոնէությունը: Բայց դա շատ ուշ պղծում էր՝ սպանուած Գալիլիացիների համար: Պիղատոսը եթովպացիների եւ դարձի եկեղեցու օրացոյցում ճանաչուած է իբրեւ սուրբ եւ մարտիրոս: Այնքան՝ Պրոկորը, յոյն եկեղեցու արքեպիսկոպոս է: Ըստ ուրիշ մի աւանդության՝ Պիղատոսը ինքնասպան է եղել, քանի որ նա չէր կարող տանել իր գործած յանցանքը:)

բ) Երկրորդ դիտողություն՝ վերոնշեալ մեկնության հետ կապուած: Սա վերաբերում է Հին եւ Նոր Ուխտերի էական տարբերութեանը: Ըստ Հին Ուխտի գլխաւոր շեշտի՝ մարդու գլխաւոր կրօնական պարտականութիւնը այն է, որ նա ապրի այնպիսի մի կեանք, որ նպատիկն այս աշխարհում մի իդէալական հասարակութեան անվերջանալի, յախտնական ապագայի ստեղծման համար: Այդ հասարակութիւնը կառարեալ կը լինի այն իմաստով, որ ամէն մարդ պարտաւոր կը լինի, եւ կամ իր կանքով, կը ճանաչի Տէր Աստծու գերիշխանութիւնը եւ ըստ Աստծու օրէնքների ապրելու անհրաժեշտութիւնը: Ըստ այս տեսակետի՝ Տէր Աստծու ընտրում է յատուկ ժողովուրդ եւ նրան վստահում այդքան ցանկալի վիճակի իրականացման պարտականութիւնը: Աստծու յայտնում է օրէնքները եւ հրահանգները, որոնք պետք է պահուեն, թէ՛ իրենց ընդհանուր ուրուագծումներով եւ թէ՛ մանրամասնութիւններով: Այսպիսով, նրանց, որոնց վստահուած է աշխարհում այդ վիճակը իրագործելու պատասխանատւութիւնը, ըստ Հին Ուխտում տրուած մի համոզումի, կարող են նաեւ կոռել եւ անհրաժեշտութեան դէպքում ոչնչացնել նրանց, ովքեր խոչընդոտ են այդ նուիրական առաքելութեան իրագործման ճանապարհին: Ըստ այս ծրագրի՝ Աստծու թագաւորութիւնը երկրային մի թագաւորութիւն է: Մահանալ այդպիսի մի թագաւորութիւնում՝ նշանակում է հրաժեշտ տալ Աստծուն եւ նրա իշխանութեանը աշխարհում եւ գնալ մի անորոշ գոյություն, ինչ-որ մի տեղ՝ երկրի մակերեսի տակ:

Այն ամէնը, որ Նոր Ուխտը պահում է այս տեսարանից, աստիճանաբար ատելի լա աշխարհի ստեղծելու պարտականութիւնն է: Երկու Ուխտերի միջեւ սակայն կայ շատ կարեւոր մի տարբերություն, որը կարելի է հարթել միայն այն դէպքում, երբ մենք վերջ նկարագրուած երկրային թագաւորութիւնը հասկանանք ոչ թէ տառացի, այլ՝ փոխաբերական իմաստով: Նոր Ուխտի նպատակը այստեղ՝ երկրում, ապագայ կերտելը չէ կամ կառարեալ հասարակութիւն եւ իդէալ պետութիւն ունենալը: Այն ատելի շատ աշխարհի՝ իբրեւ մի վայրի պատրաստումն է, որտեղ անդրանցականութիւնը հնարաւոր է: Նոր Ուխտում աշխարհը նկատի է առնուած իբրեւ կայան՝ մեր ուխտագնացութեան համար, դէպի Աստծու Թագաւորութիւն: Այսինքն՝ ուխտագնացութիւն անհատի եւ հասարակութեան համար՝ մի ներքին եւ դէպի վեր ուղղուած ուխտագնացութիւն, այն իմաստով, որ Աստծու թագաւորութիւնը կամ Մուրբ Երրորդութեան իշխանութիւնը թէ՛ մեր ներքում եւ թէ՛ մեզանից դուրս, մեր շուրջն է, եւ սպասում է, որ տեսնեն իրենց հոգու աչքերով:

Նոր Ուխտի նպատակին յաւելեալ մի նպատակն է նաեւ ցաւի հեռացումը, ամէն տեսակ ցաւի, այնքան, որքան այն հնարաւոր է հիմա, որտեղ որ գտնուի եւ երբ էլ որ

այն պատահի, օրէնքների եւ կանոնների շրջանակում կամ դրանից դուրս: Միաժամանակ, Նոր Ուխտը ճանաչում է, թէ կանոններից ոմանք ատելի են պատշաճում, քան ուրիշներ՝ անմիջական պատասխանատուութեան համար: Այն գիտակցում է, թէ այստեղ՝ ժամանակի եւ տարածութեան աշխարհում, անհնար է կատարեալ հասարակութիւն ստեղծել, որը սակայն չի կարող պատճառ լինել, որ մենք լքենք ատելի լաւ մի աշխարհի համար գործելու պարտականութիւնը:

**ՄԵՆՔ ԵՆՔ «ԻՒՐԱՅՄԱՆ» ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԵԶ**

Բանի որ մենք խօսելու ենք ժամանակի եւ տարածութեան հետեւանքների մասին՝ իբրեւ սահմանափակումների, որոնց մէջ ստեղծուել են մարդիկ ապրելու համար իրենց կեանքը՝ ճակատագրի բոլոր վեյրիվարումներով, օգտակար է պարզել այն եղանակը, որով ժամանակի եւ տարածութեան այդ սահմանափակումները պարտադրում են մարդուն: Ի՞նչ են այս սահմանափակումները: Ինչպէ՞ս է ժամանակի եւ տարածութեան աշխարհի ձգողութիւնը պատճառ հանդիսանում, որ աշխարհը վերածուի մի պետական եւ հակապետական ահաբեկչութեան եւ ուրիշ ռճիրների եւ վատ արարքների թափերաբեմի: Արդեօ՞ր այդ նոյն ձգողութիւնն է, որ անսահմանց կերպով ընդդիմանում է հոգեւորին եւ, հետեւաբար, նաեւ անդրանցականութեանը:

Իբրեւ մարմնական արարածներ՝ մի պահ մտածենք այն բացայայտ ու կատարեալ փաստի մասին, որ մենք չափելի էութիւններ ենք, այսինքն՝ մարմիններ, որոնք գրաւում են տարածք: Ուստի մենք տարածքով պայմանաւորում արարածներ ենք. ունենք որոշակի բարձրութիւն եւ լայնութիւն, գրաւում ենք այդ չափերին համապատասխան տարածք եւ ամէն տեղ եւ ամէն պահ կշռում ենք այսքան, ոչ ատել եւ ոչ պակաս: Մենք նաեւ պայմանաւորում ենք ժամանակով. գրաւում ենք «ժամանակ»՝ ապրելով եւ մեծանալով (կամ ծերանալով):

Մեր նիւթեղէն լինելու փաստն է, ահա, որ մեզ դնում է ժամանակի եւ տարածութեան մէջ եւ դրա հետեւանքով մեզ ենթարկում քանադան սահմանափակումների՝ ներառեալ բարոյական թերութիւնը: 6-րդ դարի (Ն. Բ.) Արեւմտեան (Յոյն) յայտնի փիլիսոփան՝ Պիթագորասը, արդէն բառական տեղեակ էր մարմնի կողմից մարդկային ոգուն պարտադրում սահմանափակումներին: Իր համար (Պիթագորասի) մարմինը մի բան էր, որից պէտք է խուսափել: Մարմինը նա կոչւել է գերեզման: Առանց մարմնի, հոգին ապառ կը լինի եւ ի վերջոյ կը ստանայ փափարած աստուածային կարգավիճակ: Պիթագորասը ունէր ճիշտ գաղափար, բայց սխալ փիլիսոփայութիւն: Նա ենթադրել է, թէ մարմինը եւ հոգին իրարից տարբեր երկու բաներ են, եւ հոգին բռնում է մարմնի մէջ, ինչպէս ցառկող տիկնիկը՝ արկղում: Սա Բրիտոնէական տեսակէտ չէ: Ըստ վատերական քրիստոնէական վարդապետութեան՝ հոգին եւ մարմինը երկու անջատ էութիւններ չեն: Դա է պատճառը, որ անձը՝ իբրեւ հոգին եւ մարմինը երկու անջատ էութիւններ են ժամանակի եւ տարածութեան մէկ եւ ամբողջական մի էութիւն, ենթարկում է ժամանակի եւ տարածութեան սահմանափակման: Եւ այս սահմանափակումից ապառուել հնարաւոր է միայն Յարութեան միջոցով:

Որովհետեւ ներկայիս մենք ունենք չափելի եւ նիւթեղէն մարմիններ, այդ պատճառով մենք իրարից բաժանում ենք մտում: Ֆիզիքական մարմինն է, որ իւրաքանչիւրիս արգելում է պզտու միմեանց ֆիզիքական ցառելը: Մարմինն է գլխաւոր խոչընդոտը, որ մենք չենք պզում միմեանց հոգեբանական, մտային եւ նոյնիսկ հոգեկան ընկճումածութիւնը: Տարածութիւն-ժամանակ սահմանափակումն է, որ բառական ընկճումածութիւնը: Տարածութիւն-ժամանակ ուրիշների բարեկեցութեան եւ

վզայնությունների հանդեպ: Անուարբերությունը, հոգածու, վզացակից չլինելը նոյնիսկ ստեղծությունից առաջ, ասպերջանկության գլխաւոր պատճառն է դառնում այս աշխարհում: Աշխարհում ոչ մի տեսակի կամ աստիճանի չարչարանք չի լինի, եթէ չարչարողները վզացական լինեն եւ ասյրեն իրենց Կոհերի տառապանքը: Սա վճռական կարեւորություն ունեցող հիմք է, ուստի շատ կարեւոր հարցեր է յարուցում. ա) քանի որ մենք դառապարտուած ենք իբրեւ արարածներ ասյրելու ժամանակի եւ տարածության մէջ, երբեւէ կը կարողանա՞նք դիմանալ միմեանց հանդէպ մեր ունեցած անուարբերության խարապանին: բ) Մենք երբեւէ լիովին կը գիտակցե՞նք այսպիսի անուարբերության սոսկալի հետեւանքի խորութեանը եւ տարողութեանը: գ) Այս տեսակետից շատ կարեւոր է մարդկությունը, երբ անչափ Աստուած դարձաւ չափելի, տարածության մէջ ժամանակաւոր էութիւն: Բիշ յետոյ կը տեսնենք ատէի մանրամասն, թէ՛ ա եւ բ հարցերի պատասխանը ժառակաւ է: Սակայն այդ ժառույժ չի կարող յարթահարել մեր յոյսը եւ լաւատեսութիւնը՝ երրորդ հարցի ճիշտ պատասխանի դէպքում:

Երկու կամ երեք նկատառումներ ատէի կը պարպեցնեն թէ ինչ ձեռով ժամանակի եւ տարածության աշխարհը խոչընդոտ է հանդիսանում՝ իդեալական հասարակութիւն ստեղծելու համար:

Դիտարկենք ազահութեան մոլորութիւնը: Սա գլխաւոր պատճառն է, թէ ինչու՞ աշխարհի բնական հարստութիւնները արդար կերպով չեն բաժանուել եւ ամբողջ աշխարհում դժբախտութիւնների մեծ մասի հիմքն է հանդիսանում: «Երկնքում» ազահութիւն չկայ, քանի որ ասպաժամանակի եւ ասպատարածության իրականութեան մէջ, որ երկիրքն է, նիւթական չափի միատրոնէր չկան: Հետեւաբար՝ հաշուելիք ոչինչ չկայ: Օրինակ՝ մի աշխարհում, որտեղ դու չես կարող դղարը հաշուել, չես կարող նաեւ ուրիշներից շատ կամ նուազ դրամ ունենալ: Այսպիսով ազահութիւնը վերանում է: Ազահութեան սոսկայութիւնը երկրում անմիջական հետեւանք է այն բանին, որ աշխարհը ընկել է ժամանակի եւ տարածության ցանցի մէջ: Աշխարհում խրացնելու եւ ատէի ու ատէի տարածքներ կառավարելու բուն ցանկութիւնը ազահութեան արտայայտութիւններից մէկն է, որը բոլոր պիւնտորական եւ յաճախ կայսերական յարձակումների նպատակն է եղել: Ժամանակի եւ տարածության աշխարհում մենք դառապարտուած ենք լինելու ինչ որ եւ պիտի կոչեմ «խրացման կենտրոններ»: Միտքը ատէի վարձացնենք:

Բոյսը ծրագրուած է, որ աճի: Նա բնական կերպով սնունդ է քաշում արեւից եւ իրեն սնող հողից: Կենդանին թափառում է շրջապատում, որպէսզի ուտելու մի բան գտնի: Բնականաբար, մարդ ցանկանում է այն ամէնը, ինչ հարկաւոր է իրեն՝ հաճելի ասյրելու համար: Իսկ ապգելը աշխարհից եւ նրա բնական հարստութիւնից ուրում են այնքան, որքան որ իրենք կարող են խրացնել: Այդպէս է որ՝ երկրի երեսին գոյութիւն ունեցող ամէն մի կենդանի բան, խոտի ցողունից սկսած մինչեւ ամենամեծ մարդկային կապնակերպութիւն բնականաբար, ժամանակի եւ տարածության իրողութիւններ են՝ խրացման կենտրոններ: Սեպ նիւթականութիւնը արգելում է, որ մենք ասյրենք հարուստ եւ համայնական ներդաշնակ կեանք, որի կարելիութիւնը մենք վզում ենք հոգեւոր աչքերով:

Կենդանի էակը աշխարհում կարող է միայն խրացման կենտրոն լինել: Դա իր ասյրելու նախապայմանն է՝ իբրեւ անհատ, իբրեւ տեսակ կամ իբրեւ ինքնուրոյն համայնք: Սակայն մի աշխարհ, որտեղ բոլոր կենդանի էութիւնները խրացման կենտրոններ են, տարածայնութիւնների եւ անկարգութիւնների գոտին անխուսափելի է: Որոշ մարդիկ կարող են այսպիսի գոտում ցանկութիւն ունենան ասյրելու այն համոզմով, որ նրանք ունեն այն, ինչ որ պէտք է ունենան: Բայց դա պարծենկոտ կեցումը է, որը յարիւր չէ մարդկային էակներին, այլ՝ ջորուն: Ուստի, ուշ թէ շուտ, դառապարտուած է խոնարհուելու, տեղի տալու: Բոլոր դէպքերում՝ դա առողջ

բարոյական նախընտրություն չէ: Հարկ եղած մարդկայինը, որ պետք է արուի, այն է, որ պետք է պայքարենք այնպիսի մոլորությունների դեմ, որոնք հետեւանք են մեր քառակողմ տարածական սարդոստայնի մեջ ընկնելուն, անտարբերության եւ դրա հետեւանքների՝ ներստեպ դրանց կարգում նաեւ ազատությունը: Բարոյական եւ կրօնական պատճառներով է, որ մենք փնտրակոչուել ենք՝ պայքարելու ժամանակի եւ տարածության մեջ լինելու հետեւանքների դեմ, մինչ ասլուում ենք դրա մեջ: Մեր անձերի ապակենտրոնացումը եւ վերակենտրոնացումը Աստծու էութեան մեջ, ինչպէս այդ մասին խօսեցինք ապաշխարութեան հարցի կապակցութեամբ, նոյն մետաղադրամի երկու կողմերն են: Դա է մեր պարտականութիւնը եւ կացութիւնը:

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՄԵՂԸ

Ինչպէս կարելի է ակնկալել՝ այդ կացութեան մանրամասները (ասպեկտները) ամփոփում են Ադամի եւ Եւայի պատմութեան մեջ, որը մեկնաբանելի է բազմաշերտ իմաստներով: Մարդկային տեսակի սկզբնաղբորդների (ծնողների) համար Տէր Աստուածը նախատեսեց հովուերգական տարածք, ուր նրանք պետք է ապրէին բացարձակ երանութեան մեջ՝ անտեղեակ իրենց մահկանացու լինելուն եւ անհաղորդ՝ ժամանակի կործանարար ընթացքին: Ուրեմն՝ ինչպէ՞ս կարող էին նրանք իմանալ, որ մահկանացու են: Մահկանացու լինելու մասին մեր իմացութիւնը հասարակական ըմբռնում է: Մարդը, մոլորակի վրայ ինքնուրոյն ապրելով, ոչ մի կերպ չէր կարող իմանալ, որ իր օրերը հաշուած են: Մեր գիտութեան միակ պատճառը նրանում է, որ մենք տեսնում ենք մեր տեսակին պատկանողների մահը՝ մեր շրջապատում: Բարու եւ գիտութեան ծառի արգելումը պրոտէն ուտելու կապակցութեամբ է, որ Աստուած ասում է Ադամին իր հնարաւոր մահուան մասին, կարծես թէ ակնարկելով, որ եթէ եւր Ադամն ու Եւան հնարաւորութիւն ունենան ստեղծելու իրենց սեփական արժեքները, ինչպէս վերջ ի վերջոյ պիտի պատահի, անկամբջելի վիի կը բացուի նրանց եւ Աստծու միջեւ:

Ծննդոցի պատմութեան մեջ ամենահետաքրքրական իրողութիւնն այն է, որ Աստուած՝ իբրեւ հրապուրիչ համ եւ հոտ, Եղեմի պարտելի կենտրոնում դրեց կենաց, չարի ու բարու գիտութեան ծառերը եւ արգելեց Ադամին եւ Եւային մօտենալ դրանց: Եւ, եթէ այդ ծառերի պտուղները ճաշակելու համար չէին, ինչու՞ էին դրանք ընդհանրապէս այնտեղ տնկուած: Արդեօ՞ք Աստուած զաղտնի կերպով կարգադրել էր, որ օձը Ադամին եւ Եւային ծուղակը գցի, որ նրանք մօտենան եւ պտուղը ուտեն: Աստուած ասում է Ադամին. եթէ նա ուտի պտուղը, ապա կը մեռնի հենց նոյն օրը: Իսկ օձը Ադամին եւ Եւային ասում է. նրանք չեն մեռնի, նրանք նոյն օրը չեն մեռնի, եւ ինքն է ճիշտը, ոչ թէ՝ Աստուած: Հաւանաբար, Աստուած նախանշել էր օձի մեքենայութիւնները: Աստուած կամեցել էր պատել Ադամին եւ Եւային իրենից, որպէսզի հնարաւոր դարձնի առ Աստուած վերադառնալու նրանց ընտրութիւնը: Վերջապէս, որպէսզի նրանք Աստծու օրինապահ հպատակները լինեն՝ ոչ թէ խղճուկ պարզամտութիւնից դրդուած, այլ՝ ապաւորութեամբ ընտրուած:

Աստծու տուած ապաւորութիւնը գին է պահանջում: Սրա մեջ անբացած է չարը: Արգելեալ պտղի ուտելը՝ լինի պատմութիւն, հեքիաթ, դիցաւեպ կամ մարդկային աստիճանական պարզացման շրջանի (շրջափոխութեան) մի փուլ, որը պատմութեան մեջ ներկայացնում է այն պահը, երբ մարդը հնարաւորութիւն ունեցաւ չինապանդուել Աստծուն՝ Պրոմէթէսին բնորոշ (պրոմէթէան) ընդդիմութեամբ: Դրախտի պտղի ուտելը հաւասարապօր էր Աստծուն հակադրուելուն, Նրա երեսին գոռալու, թէ՛ «այս պահից սկսեալ, մենք չենք հարցնում քեզ, թէ որն է բարոյականը եւ որը՝ ոչ: Դա մենք պիտի

որոշենք: Մենք քեզանից այդքան կախեալ չենք եւ ինքնուրոյն պիտի որոշենք մեր անելիքը: Մենք ըստ մեր նախընտրութեան պիտի կերտենք մեր ճակատագիրը: Մենք լաի եւ վառի անկախ դատաւորներն ենք»:

Հենց այս կեցածքն է պարտում սկսբնական մեղքը: Դա ոչ մի հիւանդութեան տեսակ չէ, որ մենք ժառանգում ենք: Սկսբնական մեղքը այնպիսի հակում է, որ մենք կրում ենք: Մեղքը մաս է կազմում մարդկային էութեան, բոլոր մարդկանց՝ ներառեալ սկսբնական արարածները, որոնք կարող են մարդ համարուել: Աստուծոն հակադրուելու կարողութիւնը աստուածային յատկութիւն է: Դա աշխարհը վերածում է Բաբելոնի աշտարակի, հակասութիւնների համաճարակ է սկսում: Սկսբնական մեղքից յետոյ տարածութիւնը եւ ժամանակը այդքան չեն հաւասարում դրախտային միջավայրին: Նրանք պարփակում են մեզ եւ դարձնում խրաջման կենտրոն: Այժմ մենք ժամանակի եւ տարածութեան հետ պէտք է գործակցենք՝ ընթանալով Սիրոյ առաջ, որ նուաճում է միայնակ ամէն բան: Մեր պարտաւորութիւնն է ժամանակի եւ տարածութեան հետ գործակցել՝ դրանց յաղթահարելու եւ փրկութեան շաւիղ դարձնելու նպատակով:

Այս անսահման կեցութիւնից մեզ ապառելու համար Աստուած հաղորդուեց մարդկային պատմութեանը՝ իր անձը վերածելով սահմանափակ էակի: Նա մարդացաւ մեզ նման, թէեւ Ինքը՝ իբրեւ անձ, երբեք խրաջման կենտրոնի չվերածուեց: Նա իր անձը ամբողջապէս նուիրեց նրանց, որոնց եկել էր փրկելու: Նա իր անձը կամաւոր կերպով դնում է ժամանակի եւ տարածութեան սահմանների մէջ (ոչ մեզ նման, ի հարկէ) եւ դառնում է ողջ չարութեան Կոհը. այն բոլոր չարութիւնների, որ մարդը ընդունակ է գործելու: Աստուած Իր անձը բանտարկել է աշխարհի «պատերի» մէջ, որպէսզի մենք ապառուենք այդ պարփակումից Նրա հետ եւ Նրա միջոցով (եթէ ուզում ենք): Նա մարդացաւ մեզ նման, որ մենք էլ դառնանք Նրա նման եւ այդպիսով վերագոնենք մեզ Սուրբ Երրորդութեան թագաւորութեան մէջ: Սուրբ Երրորդութիւնը Մարդացումով Ինքն իրեն տարածում է ֆիզիկական աշխարհում, որպէսզի մարդը տեսնի աշխարհը Նրա լոյսով եւ ապառագրուի դրա սահմանափակումներից ու միապաղաղութիւններից, եւ խրաջնելու անյազ մոլուցքից:

Մարդը, որի մասին խօսում ենք, ամէնուր նոյնն է, նոյնիսկ եթէ կրօնական պատկանելութիւնը նրանց տարբեր դասակարգութիւնների մէջ է դասում: Մէկը եթէ քրիստոնէաւ չէ, չի նշանակում թէ քրիստոնէական ճշմարտութիւնը նրան չի վերաբերում, ինչպէս իմ բողոքիստ չլինելու պարագան ինձ դուրս չի պահում բողոքիստական ճշմարտութեան շրջանակից: Թէեւ քրիստոնէաները բարոյական պարտականութիւն ունեն՝ ապրելու այն ճշմարտութիւնը, որ նրանք պաշտօնապէս դաւանում են (ճիշտ այնպէս, ինչպէս բողոքիստները պարտաւորուած են ապրելու այն, ինչ դաւանում են): Նշանակալից է այն ասացուածքը, ըստ որի, իսկական մի առաջադրութեան ճշմարտութիւնը կախեալ չէ դրա մասին խօսողից կամ դրա աղբիւրից:

Անգլերէնից թարգմանեց՝

Յովնան Սարկատազ Բաղդասարեանը